

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆՈ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ

բ. գ. դ., պրոֆեսոր,
ՀՀ ԳԱՄ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ,
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան,
vano.exiazaryan@mail.ru, 093-32-12-68

ԹԱԴԵՎՈՍ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան
tadevosyantad8@gmail.com, 093-00-83-80

DOI: 10.54503/1829-0116-2023.1-15

ՎԻՇԱՊԱՄԱՐՏԻ ԱՌԱՍՊԵԼՈՒՅԹԻ ՀԵՏՔԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՈՒՍԱՆԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՅՐԵՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր - քուչակյան անվանված հայրեն, վիշապամարտի առասպելությ, հայրենի տարբերակ, հայրենի փոփոխակ, գուսանաժողովրդական ծագում, միջնադարյան ձեռագիր:

Հոդվածի **խնդիր առարկան** քուչակյան անվանված հայրենների երգաշխարհում հանդես եկող վիշապամարտի առասպելության հետքերի բացահայտումն է: Հոդվածի **նպատակն** է առասպելական նախաշերտերի ու հայրենների տարբերակների գոյությամբ հիմնավորել դրանց գուսանաժողովրդական ծագումը: Հոդվածի **արդիականությունը** հայագիտության մեջ թյուրիմացաբար Քուչակին վերագրված հայրենների հեղինակային ծագման ճշգրտումն է: Հոդվածում կիրառել ենք **հերմենևտիկայի** մասնագիտական մեթոդը: Հոդվածի **գիտական նորույթը** խնդիր առարկա հայրեններում վիշապամարտի առասպելության հետքերի բացահայտումն է՝ դրանց փոփոխակների ու տարբերակների համեմատությամբ:

VANO EGHIAZARYAN

*Doctor of Philology, Professor,
RA NAS Institute of Literature, Vanadzor State University*

TADEVOS TADEVOSYAN

*Candidate of Philological Sciences, Associate Professor,
Vanadzor State University*

**TRACES OF THE BATTLE OF DRAGONS MYTHOLOGEM ON THE
ARMENIAN MEDIEVAL GUSAN-FOLK HAYRENS**

Keywords: kuchak-called, hayren, battle of dragons mythologem, version of hayren, variant of hayren, gusan-folk origin, medieval manuscript.

The subject matter of the present article is the revelation of the traces of the mythologem of the battle of dragons appearing in the song world of the hayrens (natives) called "Kuchakian". The purpose of this article is to substantiate the hayrens' Gusan-folk origin with the existence of mythical layers and hayren versions. The relevance of the article is the clarification of the copyright origin of hayrens misattributed to Kuchak in Armenology. We've used the professional method of hermeneutics in our research. The scientific novelty of the article is the revelation of the traces of the mythologem of the battle of dragons in hayrens with the correspondence of their variants and versions.

ВАНО ЕГИАЗАРЯН

*д. ф. н., профессор, НАН РА Институт литературы,
Ванадзорский государственный университет имени О. Туманяна*

ТАДЕВОС ТАДЕВОСЯН

*Кандидат филологических наук, доцент, Ванадзорский
государственный университет имени О. Туманяна*

**СЛЕДЫ МИФОЛОГЕМЫ ДРАКОНОБОРЧЕСТВА В АРМЯНСКИХ
СРЕДНЕВЕКОВЫХ НАРОДНО-ПОЭТИЧЕСКИХ (ГУСАНСКИХ) АЙРЕНАХ**

Ключевые слова: айрены, приписываемые Кучаку, мифологема драконоборчества, варианты айренов, редакции айренов, народно-поэтическое (гусанское) происхождение, средневековая рукопись.

Предмет исследования – выявить следы мифологемы драконоборчества в песенном мире айренов (гномов), приписываемых Кучаку. Цель статьи – обосновать их народно-поэтическое (гусанское) происхождение на основе мифологических архетипов и многочисленных вариантов айренов. **Актуальность** статьи заключается в уточнении происхождения айренов, ошибочно приписываемых Кучаку. В статье нами был применен **герменевтический метод**. **Научная новизна** статьи заключается в выявлении следов мифологемы драконоборчества в указанных айренах с учетом сопоставления их вариантов и различных редакций.

Հայագիտության մեջ Արիստակես վարդապետ Տևկանցը սկզբնավորել է մի թյուրիմացություն՝ ըստ որի հայկական ժողովրդագուսանական հայրենները վերագրվել են Նահապետ Քուչակին (Տևկանց, 1882): Այդ թյուրիմացությանը սկզբում նպաստել է Արշակ Չոպանյանը (Չոպանյան, 1902), հետագայում առավելապես Ավետիք Դուկասյանը (Նահապետ Քուչակ, 1957, էջ 3-35), Մկրտիչ Մկրյանը (Մկրյան 1976, էջ 464-476) և այլք:

Թեև հայագետների մեծ մասը՝ Մ. Աբեղյանը (Աբեղյան, 1967), Աս. Մնացականյանը (Մնացականյան, 1958, թիվ 2, էջ 234-257, Մնացականյան, 1971, էջ 96-126, Մնացականյան, 1995, 8-40), Օ. Եգանյանը (Եգանյան, 1960), Պ. Սևակը (Սևակ, 1987, էջ 110), Ս. Հարությունյանը (Հարությունյան, 1982, էջ 172-173, Հարությունյան, 1996, թիվ 1-2, էջ 153-168), Շ. Գրիգորյանը (Գրիգորյան, 1971, Գրիգորյան, 1984, թիվ 7, Գրիգորյան, 2000, թիվ 1-4, էջ 231-246, Գրիգորյան, 2003, էջ 76-102), Խ. Ամիրյանը (Ամիրյան, 1993), Պ. Խաչատրյանը (Խաչատրյան, 2000), Վ. Եղիազարյանը (Եղիազարյան, 2007, Եղիազարյան, 2008, Եղիազարյան, 2016), չեն ընդունել Քուչակին որպես հայրենների հեղինակ, այլ իրավամբ համարել են աշուղ, սակայն հայրենները թարգմանվել են աշխարհի տարբեր լեզուներով և տարածվել՝ որպես Նահապետ Քուչակի ստեղծագործություն:

Հարկ է նկատել, որ հայ միջնադարյան հայրեններում հանդիպում են առասպելական ժամանակների մտածողության հետքեր, որոնք ապացույցն են այն բանի, որ հայագիտության մեջ թյուրիմացաբար քուչակյան համարված այդ երգերն ունեն գուսանաժողովրդական ծագում:

Ա/ԽԴ, 166-174

Ագեստե քաղաք ես դուս,
Ու դրած ի ոսկի սենին,
Ասի, թե կտրեմ գվարդին
Լուկ առնում գիտո գվարդին,
Քո մարն ի վերայ երեկ,
Թող բաժին լինի գրողին,
Երթամ, աղաչեմ զԱստուած,

Որ ելնե հիւանդն ի նաշին (Մնացականյան, 1995, էջ 150-151):

Սիրերգ-հայրենի սիրահար հեղինակը սիրած աղջկան համեմատում է այգուց ստեղծված քաղաքի հետ, որը ոսկե սկուտեղով մատուցվում է իրեն, իսկ սիրող տղան ցանկանում է այդ այգուց վարդ կտրել, որ հոտոտի և առնի վարդի հոտը, որն այս դեպքում վայելքի խորհուրդ ունի: Մինչդեռ հայտնվում է աղջկա մայրը, որը խափանում է սիրո վայելքը՝ որպես պտղավորումը խափանող վիշապ, ինչը կապվում է հնագույն պատկերացումների՝ վիշապամարտի առասպելության հետ: Սիրային հանդիպումը խափանելու համար տղան անիծում է աղջկա մորը, իսկ վերջին տողում սիրո հիվանդ սիրահարը գնում է, աղաչում Աստծուն, որ ինքը՝ որպես սիրո հիվանդ, ելնի նաշ-դագադից, քանի որ սիրածին չվայելելը մահ է իր համար:

Այս հայրենը մեզ է հասել Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարանի հմր. 1330 (Ժամանակը՝ անհայտ) և 1371 (Ժամանակը՝ 1641թ.) ձեռագրերով՝ «Հայրեն սիրոյ» և «Հայերեն վասն ուրախութեան» խորագրերի տակ:

Աղջկա մայրը՝ որպես առասպելական վիշապ հանդես է գալիս ոչ միայն այս և այլ հայրեններում, այլև ժողովրդական երգերում ևս (Եղիազարյան, 2021, էջ 20-36):

Բերենք առասպելական վիշապամարտի հետք ունեցող մեկ այլ հայրեն.

Ա/ԾԸ, 36-43

Ա՛յ իմ ճերմակծոց կաքաւ,
Ճերմակծոց ու ծինն ի վերայ,
Քո բունդ յապառաժ վիմին,
Դ՛արծուուն ահիկն ի վերայ,
Երթամ ու բազայ լինիմ
Ու կռվիմ հինչուկ լուսանայ,
Թ՛ապրիմ անուն մի հանեմ,

Թե մեռնիմ նա յանկից անցայ (Մնացականյան, 1995, 211):

Այս հայրենը մեզ է հասել Վիեննայի Մխիթարյան միաբանության Մատենադարանի հմր. 671 ձեռագրով (Ժամանակը՝ 1668-ից առաջ):

Հայրենի մի փոփոխակ-տարբերակն էլ մեզ է հասել Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարանի հմր. 1330 ձեռագրով (Ժամանակը՝ անհայտ):

Ա/ԽԲ, 41-48

Հա՛յ իմ ճերմակծոց բազայ,
Ճերմակծոց ու ծինն ի վերայ,
Քո բունտ է անտառ մորին,
‘Է արծըվին ահիկն ի վրայ,
Երթամ, քաջ արծիւ լինամ,
Գամ, կռուիմ մինչոր լուսանայ,
Թե ապրիմ ‘ն անուն հանեմ,

Թե մեռնիմ հաշվեմ թե չեղայ (Մնացականյան, 1995, 140):

Հայրենի մի փոփոխակ-տարբերակն էլ պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 10208 ձեռագրում (Ժամանակը՝ 17-րդ դար):

Ա/ԽԲ, 9-16

Հա՛յ իմ ճերմակծոց բազա,
Ճերմակծոց ու ծինն ի վերայ,
Քո բունդ ապառաժ քարին,
Արծըվին ահիկն ի վերայ,
Երթամ, քաջ արծիւ լինամ,
Գամ, կռվիմ հինչունկ լուսանայ,
Լուսըն գայ, բարի բերե,

Ու ամեն չարըն դիւրանայ (Մնացականյան, 1995, էջ 99):

Այս սիրերգ-հայրենի տողերի շարժունությամբ է հորինված նախորդ միավորն իր բոլոր տարբերակներով, որտեղ սիրահար տղան՝ սիրած աղջկան անվանում է ճերմակծոց բազե, իսկ այս դեպքում՝ ճերմակծոց կաքավ, նրա ամուսնուն կամ սիրած տղային՝ արծիվ, որի բույնը ապառաժ վեմի վրա է, արծվի ահ-սարսափն էլ վրան: Ուստի սիրահար տղան այս հայրենում ուզում է բազե դառնալ ու կռվել արծվի դեմ՝ հանուն սիրո, եթե ապրի՝ իր անունը կհռչակվի, թե որ մեռնի՝ գոնե կմեռնի հանուն սիրած աղջկա:

Մյուս փոփոխակում՝ Ա/ԽԲ, 41-48, ճերմակծոցը բազե է, ինչպես

Նախորդ հայրենում (Ա/ԺԱ, 33-40) և իր տարբերակներում, որտեղ ոչ թե կռվում էր, այլ ապավինում էր աղոթքին, որ արծիվը մեռնի, սակայն այս դեպքում, ինքն էլ ուզում է դառնալ մի արծիվ և մինչև լույս կռվել իր սիրածին սարսափի մեջ պահող արծվի հետ, եթե կապրի, անուն կվաստակի, թե որ մեռնի՝ կհաշվի թե չի էլ ծնվել: Հենց հանուն սիրո կռիվն էլ (ակունքներում վիշապամարտի առասպելության է) այս հայրենային միավորների տարբերակման հիմքն է՝ հակառակ դեպքում սրանք ևս կդիտեինք նախորդ հայրենի տարբերակ, քանի որ նախորդ տողերում դրանք բոլորը գրեթե նույնական են: Հայրենը հենց վիշապամարտի առասպելության վերապրուկ է, իսկ աղոթքին ապավինելու փոփոխակ-տարբերակը՝ ուշ ժամանակներում կատարված փոփոխություն:

Մյուս փոփոխակում՝ Ա/ԻԲ, 9-16, ամեն ինչ նույնն է, ինչպես Ա/ԽԲ, 41-48 հայրենի դեպքում, միայն վերջին երկու տողն է փոփոխված՝ սիրող տղայի հաղթանակի ակնկալիքով.

Լուսըն գայ, բարի բերե,

Ու ամեն չարըն դիւրանայ (Մնացականյան, 1995, էջ 99):

Այս դեպքում սիրահար-արծիվը հույս ունի, որ ինքը պիտի հաղթի մրցակից արծվին, լույսի հետ պիտի բացվի բարին ու ամեն դժվարություն վերանա իր համար:

Ս. Հարությունյանն արդեն իսկ նկատել է, որ կան վիշապի դրսևորման երեք համալիրներ՝ «վիշապ-ջուր-աղջիկ, վիշապ-երկինք-արև, վիշապ-ծառ-արծիվ: Վիշապների գործառույթն այս երեք եռառարկա համալիրներում նույնն է՝ կլանող, ծածկող, թաքցնող: Տարբեր են, սակայն, նրանց գտնված տեղերը (ջուր, երկինք, ծառ) և նրանցից կլանվող, ծածկվող առարկաները (աղջիկ, արև, արծիվ)» (Հարությունյան, 2000, էջ 173):

Հայրենի տարբերակների ու փոփոխակների գոյությունը, տների ու տողերի շարժունությունը, «ահիկ», «հինչուկ» նվագական ձևերը, ինչպես նաև Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 10208 ձեռագրի և Վիեննայի Մխիթարյան միաբանության Մատենադարանի հմր. 671 ձեռագրի ժամանակներն ակնհայտորեն ցուցանում են, որ հայրենի հեղինակը չէր կարող Նահապետ Քուչակը լինել: Ավելին՝ հիշյալ ձեռագրերից որևէ մեկում չկա որևէ անուն՝ որպես հայրենի հեղինակ: Ուստի իրավացի է Աս. Մնացականյանը, որ այն համարել է գուսանա-ծողովդական հայրեն:

Բերենք ևս մեկ հայրեն, որում արտահայտվել է վիշապամարտի առասպելույթի հետքեր.

Ա/ԻԲ, 21-36

Գիշերս ես ի դուրս ելայ,
Թուխ ամպեր 'Լ անուշ կու ցողայ,
Իմ եարն այլ պառկած տեսայ՝
Շար շապկանց ու բաղնեվայ,
Ոտկուկս առ ու դիր արի,
Թե մտնեմ ի ծոցն Նորա,
Չգլխակն այլ ի վեր իկայ,
Թուխ աչօքն արաւ, թե՝ «Գնա՛,
Գնա՛ ու այն պահն եկո,
Հաւ ի քուն, որ մարդ չիմանայ,
Սև օձն ի ծոցիս ունիմ,
Չիմանայ, քեզ դաստ կու ջանայ,
Դառնայ արևետ հանէ,
Ու մանկան արիւն մտնէ Նա,
'Է ինձ Նոր տերտեր լինայ,

Որ սիրտս սիրուտ հասրեթ կու մնայ» (Մնացականյան, 1995, էջ 99-100):

Այս հայրենը մեզ է հասել Մաշտոցի անվան մատենադարանի հմր. 10208 ձեռագրով (թերթ 181բ-182ա)՝ գրչագրված 1672-ից հետո: Նույն ձեռագրում (թերթ 182բ) կա հայրենի մեկ այլ տարբերակ, որի 4-րդ տողը տարբեր է, չունի 9-10 տողերը, 13-16 տողերի փոխարեն ունի այլ երկտող:

Ա/ԻԳ, 25-36

Այս գիշերս ի դուրս ելայ,
Թուխ ամպեր 'Լ անուշ կու ցողայ,
Չիմ յարն այլ պառկած տեսի,
Ու կանանչ եօրդանն ի վերայ,
Ոտկուկս առ ու դիր արի,
Թե մտնեմ ի ծոցն Նորա,
Նա զգլխակն ի վեր իկայ,
Թուխ աչօքն ասաց, թե՝ «Գնա՛,
Սեւ օձն ի ծոցիս ունիմ,
Չքեզ տեսնու 'Լ ինձ դաստի ջանայ»,

Հառչելեն ի յետ դարծայ,

‘Ի ու գովեմ զսուրաթըն Նորա (Մնացականյան, 1995, էջ 101-102):

Վերջինի մի այլ տարբերակը մեզ է հասել Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարանի հմր. 160 զրչության ժամանակն անհայտ ձեռագրով:

Ա/ԾԱ, 311-322

Այս գիշեր դուրս ելայ,

Թուխ ամպ էր ‘Լ անուշ կու ցողայ,

Չիմ եարն ալ պառկած տեսայ,

Ու կանանչ եօղան ի վրայ,

Ոտկունքս առ ու դիր արի,

Թե մտնում ի ծոցըն Նորա,

Գլխակն ալ ի վեր իկայ,

Թուխ աչօքն արաւ, թե՛ Գնա՛,

Սև օձ կայ ի յիմ ծոցիս,

Որ չելնե ու դաստի ջանայ,

Հառչելով ի յետ դարծայ,

Թե գովեմ զսուրաթըն Նորա (Մնացականյան, 1995, էջ 197):

Սրա մի տարբերակն էլ պահպանվել է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի ձեռագրերում, որն ընթերցանակել է Մկրտիչ Պոտոկյանը, որտեղից էլ Աս. Մնացականյանը տպագրել է որպես Ա/ԾԲ, 16-28 միավոր.

Ես գիշերս ի դուրս ելայ,

Թուխ ամպեր, անուշ կու ցողայ,

Չիմ եարն ալ պառկած տեսայ

Ու կանանչ եօղան ի վերայ:

Ոտկունքս առ ու դիր արի,

Թե մտնում ծոցիկն ի նարայ,

Գլխարկն ալ ի վեր իկայ,

Թուխ աչօք արաւ, թե՛ Գնայ,

Սև օձ կայ իմ ծոցիս,

Որ չելնե քեզ դաստի ջանայ

Հառչելեն ի ետ դարծայ,

Ու գովեմ զսուրաթ նարայ (Մնացականյան, 1995, էջ 201):

Ինչպես պարզորոշ նկատելի է, վերջին երեքը նույն հայրենի տարբերակներն են, իսկ առաջինը՝ դրանց ընդարձակված փոփոխակը:

Այս սիրերգ-հայրենը մի ուշագրավ փոքրիկ սիրային պատմություն է՝ արտաքուստ ամուսնացած կնոջ հետ սիրային կապ ունենալու և սիրո վայելքի արտահայտություն, սակայն հայրենի ներքին շերտերում թաքնված է վիշապի և վիշապամարտի առասպելությոթ:

Սիրահար տղան դուրս է ելնում գիշերը, երբ թուխ ամպերը իջել են, և տեսնում է իր սիրածին՝ պառկած «շար»-մետաքս շապիկով ու «բաղնելվայ»-լողացած, իսկ տարբերակներում՝ կանաչ «ետրղան»-վերմակը վրան գցած: Ինչ կաներ այս պահին սիրահար տղան, եթե ոչ՝ «Ոտկուկնքս առ ու դիր արի, / Թե մտնեմ ի ծոցըն նորա», այն է՝ գաղտագողի ուզում է մտնել նրա ծոցը: «Առ ու դիր անել» դարձվածն այստեղ ունի «ոտնաթաթերի վրա կամացուկ քայլելու» իմաստ, սակայն «Միջին հայերենի բառարան»-ում բացատրվել է՝ որպես «ոտքերը վերցնել դնելով՝ քայլ անելով շարժվել՝ գնալ»: Սիրած կինը հանում է գլխաշորը, թուխ աչքով հասկացնում, որ սիրեցյալը գնա և գա այն ժամին, երբ հավքն արդեն թառած լինի («Հաւ ի քուն, որ մարդ չիմանայ»), այսինքն՝ քնած լինեն բոլորը, որ հանկարծ տեսնող չլինի: Նկատենք, որ սիրո, ջուր-հեշտանքի ու գեղեցկության աստվածուհի Աստղիկ դիցուհին լողանում էր հենց գիշերով, որ տեսնող չլինի, ինչի համար էլ ամպ-մշուշով էր պատում Մշո դաշտը:

Ի դեպ, «Գնա՛ ու այն պահն եկո, / Հաւ ի քուն, որ մարդ չիմանայ» տողը բացակայում է մյուս բոլոր տարբերակներում: Իսկ շարունակության մեջ կնոջ խոսքից բացահայտվում է, որ սիրած կինն ամուսին ունի՝ «Սև օձն ի ծոցիս ունիմ»: Ուստի պետք է զգուշանալ, քանի որ ամուսինը կիմանա ու կկռվի, կսպանի նրան և կդառնա «մանուկ»-կտրիճ տղամարդու մահվան պատճառը՝ մնալով արյան տակ, իսկ կնոջ համար մի նոր դարդ կլինի այն, որ այլևս չի տեսնի իր փափագած սիրելի տղամարդուն:

Կնոջ այս ուշագրավ խոսքերը բացակայում են մյուս բոլոր երեք տարբերակներում, որի փոխարեն քնարական կերպար սիրահար տղայի խոսքն է. վերջինս իմանալով կնոջ ծոցի սև օձի մասին, հառաչելով ետ է դառնում և գովում է իր սիրած կնոջ գեղեցկությունը:

Հարկ է ուշադրություն դարձնել հայրենի առասպելական նախաշերտերին. այսպես՝ թուխ ամպը, կնոջ «բաղնելվայ»-լողանալը, կանաչ «ետրղան»-ը, սև օձը և նրա հետ կռիվը վիշապի և վիշապամարտի առասպելությոթի ակնհայտ վերապրուկներն են: «Որ չելնէ ու դաստի ջանայ», «Որ չելնէ քեզ դաստի ջանայ», «Չիմանայ, քեզ դաստ կու ջա-

նայ», «Չքեզ տեսնու 'Լ ինձ դաստի ջանայ» տարբերակներից վերջինը հեռացած է և չի արդարացվում՝ հենց վիշապամարտով պայմանավորված: Այսպես՝ հայր երկնքի և մայր երկրի սրբազան ամուսնության առասպելության արտահայտվում է վիշապ-ամպերով արեգակի դեմքը փակելով, «բաղնելվա»-լողացած կինը երկնքից անձրևի միջոցով պտղավորված երկիրն է, որը ծածկվել է կանաչ «եօրդան»-ով, այն է՝ հայր երկիրը խոնավության միջոցով պտղավորում է մայր երկիրին: Հայտնի է, որ առասպելաբանության մեջ ջուրը սեռական հեշտանքն է խորհրդանշում (Հարությունյան, 2000, էջ 163): Սև օձը վիշապ-ամպն է, որի հետ պիտի կռվի վիշապամարտիկը, որպեսզի ցրվեն թուփ ամպերը և անձրևից հետո բացվի արեգակի դեմքը: Սակայն հնագույն առասպելական նախաշերտերը հայրենի առաջին տարբերակում, որը հետագայում է ընդարձակվել, ստացել են կենցաղային որոշ երանգավորումներ՝ կապվելով ամուսնացած կնոջը ծածուկ սիրելու հետ:

Ուշագրավ է քննարկվող հայրենում գրաբարյան «ջանալ» բառածևի առկայությունը, որը խոսում է հայրենի հնության մասին: Իսկ նվազական, փաղաքշական «ծոցիկն» բառածևը, «շար», «հասրեթ», «եօրդան», «դաստ», «սուրաթ» օտար բառերի, ինչպես նաև «առ ու դիր արի», «արևետ հանե» դարձվածքների առկայությունը, միաժամանակ նաև տարբերակների գոյությունը խոսում են հայրենի գուսանաժողովրդական ծագման մասին:

Եզրակացություն

Հայրեններում արտահայտվել են վիշապամարտի առասպելության հետքեր, որոնք ապացույցն են այն բանի, որ միջնադարյան այդ երգերը վերապրուկն են վաղմիջնադարյան հայկական հին գուսանական երգերի, որոնք ազնվականական միջավայրից անցել են քաղաքային միջավայր՝ վերածվելով միջնադարյան գուսանաժողովրդական երգերի, կենցաղավարելով բանավոր ճանապարհով, ունենալով տարբերակներ ու փոփոխակներ, տների ու տողերի շարժություն, իսկ ավելի ուշ՝ 14-18-րդ դարերում գրառվել են միջնադարյան ծեռագրերում՝ հայրենային տաղաշարքերով, որոնցից որևէ մեկում իբրև հեղինակ չի հիշատակվել Նահապետ Քուչակը, ում սխալմամբ վերագրվել է հայրենների այդ հարուստ երգաշխարհը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ., Երկեր, հտ. Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967:

Ամիրեան Խ., Թուրքալեզու հայ աշուղներ. Օսմանյան Կայսրություն. 16-20րդ դարեր, Փարիզ, 1993:

Գանձարան հայ հին բանաստեղծության, աշխ. **Պ. Խաչատրյանի**, Երևան, «Հայգիտակ», 2000:

Գրիգորյան Շ., Հայ աշուղական գրականության պատմություն, Երևան, Ձանգակ-97, 2003, էջ 76-102:

Գրիգորյան Շ., Հայ հին գուսանական երգեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971:

Գրիգորյան Շ., Ռ՞վ է, ի վերջո, Նահապետ Քուչակը, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1984, № 7:

Գրիգորյան Շ., Ռ՞վ է իրականում Նահապետ Քուչակը, Բազմավեպ, Վենետիկ, 2000, ՃԾԸ 1-4, էջ 231-246:

Եգանյան Օ., Նահապետ Քուչակի հայատառ թուրքերեն տաղերը, Բանբեր Մատենադարանի, թիվ 5, 1960:

Եղիազարյան Վ., Հայագիտական ուսումնասիրություններ, Ա, Բանագիտություն և միջնադարագիտություն, Երևան, «ՎՄՎ ՊՐԻՆՏ» հրատարակչություն, 2021, էջ 20-36:

Եղիազարյան Վ., Հայրեններ, Վանաձոր, ՍԻՄ տպագրատուն, 2007:

Եղիազարյան Վ., Նահապետ Քուչակը և նրա անունով մեզ հասած երգերը, Գրականագիտական հանդես, ԺԵ, 2016, էջ 16-43:

Եղիազարյան Վ., Քուչակյան թյուրիմացություն, թե՞ անիմացություն, Գրական թերթ, 2008, 25 հունվարի:

Հայրեններ, աշխատասիրությամբ՝ **Ա. Շ. Մնացականյանի**, Երևան, «Նաիրի», 1995, էջ 8-40:

Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, Համազգայինի Վահե Սեթեան, 2000, էջ 173:

Հարությունյան Ս., Հայրենների խնդիրը և Ասատուր Մնացականյանի գիտական նոր համահավաքը, Պատմա-բանասիրական հանդես, 1996, թիվ 1-2, էջ 153-168:

Հարությունյան Ս., Նահապետ Քուչակ, տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 8, Երևան, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչություն, 1982, էջ 172-173:

Մկրյան Մ., Նահապետ Քուչակ, տե՛ս Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դարեր, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1976, էջ 464-476:

Մնացականյան Աս., Հայրենների և Նահապետ Քուչակի մասին, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1958, թիվ 2, էջ 234-257:

Մնացականյան Աս., Միջնադարյան սիրո հայրենների անդրանիկ ժողովածուն և հայրենների հարցը, տե՛ս Էջերի հայ ժողովրդի պատմության և բանասիրության, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971, էջ 96-126:

Նահապետ Քուչակ, Հայրենի կարգավ, Երևան, Հայպետհրատ, 1957, էջ 3-35:

Զոպանյան Ա., Նահապետ Քուչակի դիվանը, Փարիզ, 1902:

Պարոյր Սևակ, Սայաթ-Նովա, Երևան, Սովետական գրող, 1987, էջ 110:

Տևկանց Ա., Հայերգ, մեղեդիք, տաղք և երգք, Թիֆլիս, 1882:

REFERENCES

Abexyan M., Erker /Countries/, ht. 2, Yerevan, HSSR GA hrat., 1967.

Amiryan X., Tyrqalezu hay ashuxner. Osmanyan Kaysrutyun. 16-20rd darer /Turkish-speaking Armenian ashughs. Ottoman Empire. 16-20th centuries/, Paris, 1993.

Gandzaran hay hin banastextsutyan /Treasury of ancient Armenian poetry/, ashx. P. **Xachatryani**, Yerevan, «Haygitak», 2000.

Grigoryan Sh., Hay ashuxakan grakanutyan patmutyun /History of Armenian ashough literature/, Yerevan, Zangak-97, 2003, pp. 76-102.

Grigoryan Sh., Hay hin gusanakan erger /Ancient Armenian minstrel songs/, Yerevan, HSSH GA hrat., 1971.

Grigoryan Sh., Ov e, I verjo, Nahapet Quchaky /Who is eventually Nahapet Kuchak?/, Lraber hasarakakan gitutyunneri, Yerevan, 1984, № 7.

Grigoryan Sh., Ov e irakanum Nahapet Quchaky /Who is actually Nahapet Kuchak?/, Bazmavep, Venetik, 2000, t. 1-4, pp. 231-246.

EGanyan O., Nahapet Quchaki hayatar turqeren taxery /In Armenian letters Turkish taghs of Nahapet Kuchak/, Panber Matenadarani, tiv 5, 1960.

Eghiazaryan V., Hayagitakan usumnasirutyunner, A, Banagitutyun ev mijnadaragitutyun, /Armenian studies, A, Philology and Medieval studies/, Yerevan, «VMV PRINT» hrat., 2021, pp. 20-36.

Eghiazaryan V., Hayrenner /Hairens/, Vanadzor, SIM tpagratun, 2007.

Eghiazaryan V., Nahapet Quchaky ev nra anunov mez hasac ergery /Nahapet Kuchak and the songs that have come down to us in his name/, Grakanagitakan handes, 2016, pp. 16-43.

Eghiazaryan V., Quchakyan tyurimacutyun, te animacutyun /Kuchak misunderstanding or ignorance?/, Grakan tert, 2008, 25 hunvari.

Hayrenner /Hayrens/, ashxatasirutyamb` **A. W. Mnacakanyani**, Yerevan,

«Nairi», 1995, pp. 8-40.

Harutyunyan S., Hay araspelabanutyun /Armenian mythology/, Beirut, Hamazgayini Vahe Setyan, 2000, p. 173.

Harutyunyan S., Hayrenneri xndiry ev Asatur Mnacaknyani gitakan nor hamahavaqy /The problem of hairiens and the new scientific gathering of Asatur Mnatsakanyan/, Patma-banasirakan handes, 1996, tiv 1-2, pp. 153-168.

Harutyunyan S., Nahapet Quchak /Nahapet Quchak/, Haykakan sovetakan hanragitaran, ht. 8, Yerevan, Haykakan SSH Minostmeri soveti hrat., 1982, pp. 172-173.

Mkryan M., Nahapet Quchak /Nahapet Qucak/, Hay mshakuyti nshanavor gortsichnery V-XVIII darer /Prominent figures of Armenian culture V-XVIII centuries/, Yerevan, Yerevani hamalsarani hrat., 1976, pp. 464-476.

Mnacakanyan As., Hayrenneri ev Nahapet Quchaki masin /About hairiens and Nahapet Kuchak/, Patma-banasirakan handes, Yerevan, 1958, tiv 2, pp. 234-257.

Mnacakanyan As., Mijnadaryan siro hajrenneri andranik joxovacun ev hayrenneri harcy /The first collection of hairiens of medieval love and the problem of hairiens/, Eger hay joxovrdi patmutyan ev banasirytyan/, Yerevan, HSSH GA hrat., 1971, pp. 96-126.

Nahapet Quchak, Hayreni kargav /By hairien's order/, Yerevan, Haypethrat, 1957, pp. 3-35.

Chopanyan A., Nahapet Quchaki divany /Nahapet Kuchak's anthology/, Paris, 1902.

Paruyr Sevak, Sayat-Nova /Sayat-Nova/, Yerevan, Sovetakan grox, 1987, p. 110.

Tevkanc A., Hayerg, mexediq, taxq ev ergq /Armeniansong, melody, rhyme and song/, Tiflis, 1882.

Վանո Եղիազարյան - Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են հայ ին և միջնադարյան գրականությունը, բնագրագիտությունը՝ գրաբար բնագրերի փոխադրությամբ, բանագիտությունը, արդի հայ գրականությունը և գրական քննադատությունը: Տպագրվել են հարյուրից ավելի հոդվածներ, 24 գրքեր: Մի քանի աշխատություններ թարգմանվել և տպագրվել են այլ լեզուներով: vano.exiazaryan@mail.ru.

Vano Eghiazaryan - Doctor of Philology, Professor. Scientific interests: Ancient and Medieval Armenian literature, Textology,-originality with transfer of Grabar texts, Folkloristics, Modern Armenian literature and Literary criticism. Author of 24 books and over 100 articles. vano.exiazaryan@mail.ru

Вано Егиазарян - д.филол.н., проф. Сфера научных интересов: древнеармянская и средневековая армянская литература, текстология – с переводом (изложением) древнеармянских (на грабаре) оригиналов, фольклористика, современная армянская литература и литературная критика. Были опубликованы более ста статей, 24 книги (монографии). Некоторые работы переведены и опубликованы на других языках. vapo.exiazaryan@mail.ru.

Թադևոս Թադևոսյան` բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ: Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են հայկական, սլավոնական ու օսական բանահյուսությունը և դիցաբանությունը, էպոսագիտությունը, բանահյուսական ոչ հեքիաթային արձակը, 20-րդ դարասկզբի ռուս գրականությունը: Տպագրվել են ավելի քան 60 գիտական աշխատություններ և 4 մենագրություններ: Էլ. փոստ` tadevosyantad8@gmail.com

Tadevos Tadevosyan - Candidate of Philological Sciences, Associate Professor. Head of the Department of Foreign Languages and Literature, Vanadzor State University after H. Tumanyan. Scientific interests: Armenian, Slavic and Ossetian folklore and mythology, epic studies, folklore non-fairytale prose, Russian literature of the early 20th century. Author of over 60 scientific papers and 4 monographs. E-mail: tadevosyantad8@gmail.com

Тадевос Тадевосян - Кандидат филологических наук, доцент. Заведующий кафедрой иностранных языков и литературы Ванадзорского государственного университета имени О. Туманяна. Научные интересы: армянский, славянский и осетинский фольклор и мифология, эпосоведение, фольклорная несказочная проза, русская литература начала XX в. Автор свыше 60 научных работ и 4 монографий. Эл. почта: tadevosyantad8@gmail.com